



193. ԳԱՅԼԸ, ԱՂՎԵՍԸ ԵՎ ՈՒՂՏԸ

Մի ուղտ, աղվես և զալլ միասին ճանապարհ էին գնում։
Ճամփին նրանք մի գաթա գտան։ Մտածեցին, մտածեցին, թե ով
ուտի, ով շուտի գաթան, որովհետև հազիվ մեկին բավարա-
րիր Մտածում են ու որոշում, թե ամեն ոք թող իր տարիքն ասի,
ով ամենից մեծը կլինի, նա էլ կուտի։

Դալլն ասում է. — Ես որ ծնվել էի, դեռ աշխարհ չկար։

Աղվեսն ասում է. — Ես մի տղա ունեի, նա է աշխարհս շինել։

Այստեղ ուղտը տեսնում է, որ երկուան էլ խորամանկություն
են բանեցնում, և գաթան ձեռից գնալու է, վերցնում է, վիզը
վեր բարձրացնում և ուտելով ասում. — Ի՞նչ է ուղտը երեխա է։

